դարեան նախնեաց աշխարհիկ լեզուով գրուած՝ մութ բժշկարաններու և սոնց նման գրուածոց էջերուն վրայ։ Բայց գործադրուելու համար՝ Պ. Բոլատի ոչ միայն իւր բաժնորդք պէտք են թիկունք ըլլալ, այլ և ամենայն բանասէրք (իրենց հաւաքած կամ գիտցած գաւառական բառերը ո՛և իցէ ազգային թերթի մը մէջ հրատարակելով, կամ առ յիշեալ Խմբ. խմբելով), որք սիրող են Հայ գրականութեան յառաջդիմութեան։

20. Մուրճի այս տարուան (N.° 5 էջ 740) թերթէն կ՚իմանամք, որ Թիֆլիզի ազգային գրականական խումբ մը որոշած է այս ամսոյս կամ նոյեմբերի մէջ՝ Խաչատուր Աբովեանի մահուան յիսներեակի առթիւ կատարել հոգեհանգիստ և գրականական երեկոյթ մը, ինչպէս 1890ին մի այլ հանդէս կատարած է այս ազնուամիտ խումբը Հ. Ղեւոնդ Ալիշանի յոբելեանի առթիւ։

Մուրատ — Ռափայէլեան Լիկէոնի գիտութեանց և արուեստից պարապող աշակերտներէն՝ ընթացքնին աւարտեցին Պ. Յովհաննէս Եփրեմեան. որ իւր տարբական և բարձրագոյն ուսումնական ընթացքը կատարած է սոյն Լիկէոնին մէջ. յետ ուսումնաւարտութեան՝ ըստ որոշողութեան Վանացս խնամակալաց Ժողովոյն՝ աշակերտած է 4 տարի՝ քաղաքիս Մեքենական և Արուեստական վարժարանին մէջ. ամէն տարի փայլուն ընթացք մը ունեցած է, և վերջապէս իւր վերջին քննութեամբ բարձր թիւերով պսակուած է։ — Պ. Դաւիթ Դաւթեան. սա իւր տարբական մէջին աստիճանի ուսումնական ընթացքը կատարած է՝ Տրապիզոնի և Քաղկեդոնի Մխիթարեան վարժարանաց մէջ, ուր ուսմանց հետ միանգամայն լուսակահարութեան պարապած է։ Վերոյիշեալ ժողովոյն իմանալով սորա լուսակահարութեան մասին ունեցած ընդունակութիւնը, աշակերտեցուց Մուրատ—Ռափայէլեան Լիկէոնին, ուր լուսակի և դաշնակի վարժապետներով՝ երաժշտութեան սկզբնական և միջին մասերը մշակել տալէն վերջը, որոշեց որ նա աշակերտի քաղքիս ամենէն բարձրագոյն երաժշտական Լիկէոնին. այս տարի, որ է իւր ընթացքին վերջին և Երրորդ տարին, վկայեցաւ բարձր թիւերով։ — Պ. Անտոն Մահեուպեան. աշակերտ Քաղկեդոնի Մխիթարեան վարժարանի, ուր յետ փայլուն քննութեանց արժանացաւ աշակերտելու Վենետիկ հռչակաւոր Պետական բարձրագոյն վարժարանի վաճառականութեան. ամէն տարի առաջնակարգ թիւեր ստացած է, և այս տարի, որ է իւր վերջին և Դ՝ որդ տարին, պսակուած է բարձր թիւերով։

ՑԵՂԵԿԱԳԻՐ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ ԲԱԶՄԱՎԻՊ

ՆՈՐ ՀԱՐՑՄՈՒՆՔ

Նոր աշխարհի մեր թղթակիցներէն մին կը գրէ.

«Կը փափաքէի պատուական Հանդէսի միջոցով հետեւեալ երեք հարցմանցս պատասխաններն գիտնալ։

ա. Վեշտասանեարորդ դարէն սկսեալ մինչեւ ցարդ որո՞նք ուղեւորած են դէպ ի հիւսիսային բեւեռ։

բ. Որոնք են աշխարհիս մեծ նաւահանգիստները, ի՞նչ խորութիւն ունին և ի՞նչ ատենամի է իւրաքանչիւրին վաճառականական շարժումն։

գ. Առաջին անգամ ե՞րբ և ո՞ւր սկսած է նամակադրոշից (timbres-poste) գործածութիւնն. — բարձր գին ունեցող նամակադրոշները որո՞նք են և որո՞նց հաւաքածոյները աւելի նշանաւոր են»։

ՄԱՆՈԹ. Բազմավիպի յոյլ. ամսոյն «Մուս»ի նկատմամբ եղած հարցման պատասխանը պատրաստ է, բայց տեղոյ անձկոտբեան պատճառաւ կը յետաձգենք յաջորդ պրակին։

ԵՐԵՔ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Դար ատենով ծայր մ՚աշխարհի
Մեծ ինքնակալ մը, կար նոյնպէս
Փոքրիկ հովիւ մը լեռանցի,
Որ կը խօսէր ոսկեի պէս։

Դահին առջև այն ինքնակալ
Դանչեց հովիւին այն ոսկեղէն.
«Որդեակ, կ՚ուզեմ փորձել ես զլ
Իմաստութիւնդ՝ որ շատ գովեն։

Թէ կարենաս լաւ և արագ
Պատասխանել երեք հարցմանց,
Որ և ընես զիս խայտառակ,
Որդեակ, դու իմն պիտի ըլլաս։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ ԲԱԶՄԱՎԻՊ

ՆՈՐ ՀԱՐՑՄՈՒՆՔ

Նոր աշխարհի մեր թղթակիցներէն մին կը գրէ.

«Կը փափաքէի պատուական Հանդէսի միջոցով հետեւեալ երեք հարցմանցս պատասխաններն գիտնալ։

ա. Վեշտասանեարորդ դարէն սկսեալ մինչեւ ցարդ որո՞նք ուղեւորած են դէպ ի հիւսիսային բեւեռ։

բ. Որոնք են աշխարհիս մեծ նաւահանգիստները, ի՞նչ խորութիւն ունին և ի՞նչ ատենամի է իւրաքանչիւրին վաճառականական շարժումն։

գ. Առաջին անգամ ե՞րբ և ո՞ւր սկսած է նամակադրոշից (timbres-poste) գործածութիւնն. — բարձր գին ունեցող նամակադրոշները որո՞նք են և որո՞նց հաւաքածոյները աւելի նշանաւոր են»։

ՄԱՆՈԹ. Բազմավիպի յոյլ. ամսոյն «Մուս»ի նկատմամբ եղած հարցման պատասխանը պատրաստ է, բայց տեղոյ անձկոտբեան պատճառաւ կը յետաձգենք յաջորդ պրակին։

ԵՐԵՔ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Դար ատենով ծայր մ՚աշխարհի
Մեծ ինքնակալ մը, կար նոյնպէս
Փոքրիկ հովիւ մը լեռանցի,
Որ կը խօսէր ոսկեի պէս։

Դահին առջև այն ինքնակալ
Դանչեց հովիւին այն ոսկեղէն.
«Որդեակ, կ՚ուզեմ փորձել ես զլ
Իմաստութիւնդ՝ որ շատ գովեն։

Թէ կարենաս լաւ և արագ
Պատասխանել երեք հարցմանց,
Որ և ընես զիս խայտառակ,
Որդեակ, դու իմն պիտի ըլլաս։

digitised by A.R.A.R.@

Ըսէ ծովում մէջ անյատակ
Ո՞րչափ շքոյ կաթիլներ կամ :
— Միթէ կայ բան մ'ասկէ յրստակ,
թէ և ըլլայ լի ովկիան :

Արգիլեցէ՛ք, տէր իմ արքայ,
Լոկ այս խրոնիրքը ձեզ կ'ընեմ,
Որ ամծրևի չիթ մ'ալ չէյնայ
Մինչև որ ես ամբողջ համրեմ :

— Էիմկու հիմայ ըսէ ո՞րքան
Երկինքն աստղեր կամ փայլունակ,
Որ պատռեմ քոզը գիշերուան :
— Իմ պատասխանս է անսայթաք.

Հաւաքեցէք զանոնք ամէն
Նէ ըսէք որ հոս վար իջնան,
Նէ ես բոլոր պիտի համրեմ
Մեծ փոքր առանց բացառութեան :

— Սըրնամս ըսել թէ քանի՞ օր
Ցաւիտենից մէջ պիտի ՝ լլայ՝
— Իրաւցրնէ, տէր թագաւոր,
Այս հարցումէն դիւրին բան կայ :

Հրաման տուէք, տէր թագաւոր,
Որ կեցրնէ ժամն իր անխ,
Չի համրելով ես քիւրաւոր
Օրերն անոնց տամ ձեզ հաշիւ :

— Հասակիդ քով խելքդ է նրրքին,
Փոքրիկ հովիւս, ըսաւ արքայն.
Ցուլեր գիտնոյ պէս պատասխան.
Կեցի՛ր հոս, իմ եղիր որդին :

ԹՐԳՄ. Հ. ԱՐՈՒՆ ՂԱՋԻԿԵԱՆ

ՇԱԴՈՊԻՈՒՆԻ ՄԱՀՈՒԱՆ ՑՈՐԵԼԵԱՆՆ (1768–3 ՑՈՒԼԻՍ 1848)

Ցուլիս 4ին Հանդիսաւոր կերպով տօնուեցաւ Սէն Մարոյ Հանդարտ, զուարթ և Հովանաւոր փոքրիկ քաղաքին մէջ՝ ուր մեծ բանաստեղծն շարադրեց Վիկայքը, և իրեն ուրիշ գործերը. Հոն՝ ուր կը գտնուի նաև իւր գերեզմանը և ուր կարծես մենակեաց կը շրնագային Ռը-նեի գոռոզ և մելամաղձոտ, և անմոռանալի Ատաշային ազնիւ և միամիտ ոգիները։

Լոյս տեսնելու վրայ են նոր տպագրաւ թեամբ Ազնդրերզմանեան յիշատակները, որ այդ հանդիսական հանդիսին արժանաւոր յիշատակ մը պիտի ըլլան։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄԻՍ

ՕԳՈՍՏՈՍ 20

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ ԵՒ ՍՊԱՆԻԱ

Յետ երկար բանագնացութեանց ընդկամբոնի դեսպանի Գալլիոյ, Սպանիոյ կողմանէ, և ընդ. նախագահն Մըկ-Քինլէի, հաշտութեան նախաստանմանքը որոշեցան և ստորագրուեցան երկու կողմանէ Օգոստոս 12ին, որոնք վեց յօդուած կը պարունակեն.

1. Սպանիա կը հրաժարի Կուբայի վրայ ունեցած իշխանութենէն։

2. Պորտօ Ռիքօ և Սպանիոյ Հնդկ–Արեւմտեան միւս կղզիք, ինչպէս նաև Լատրոնէս արշիպեղագոսի կղզիներէն ոմանք, ըստ ընտրութեան Միացեալ Նահանգաց, կը մնան Միացեալ Նահանգաց։

3. Միացեալ Նահանգք պիտի գրաւեն Մանիլայի քաղաքը, ծոցը և նաւահանգիստը, մինչև որ խաղաղութեան վերջնական դաշինք ստորագրուին և որոշուին Փիլիպպեան կղզեաց ստանալիք կառավարութիւնը։

4. Կուբա, Պորտօ Ռիքօ և Հնդկ–Արեւմտեան կղզիք փութով պիտի պարպուին ի Սպանիացւոց։ Առ այս երկու կողմանէ տասը օրուան մէջ գործակատարք պիտի որոշուին, որոնք 30 օրուան մէջ պիտի սահմանեն պարպուելու վերաբերեալ ամեն խնդիրք։

5. Խաղաղութեան համար Սպանիա և Միացեալ Նահանգք հնգական նուիրակք պիտի անուանեն, որոնք ամենէն ուշ Հոկտեմբեր 1ին պիտի գումարուին ի Պարիս։

6. Հաշտութեան նախաստանմանց ստորագրուելէն անմիջապէս կը սկսի զինադադարը, և պէտք է փութով հրամաններ ղրկուին, այս իմաստով, ցամաքային և ծովային հրամանատարաց։

Եթէ Սպանիոյ Թագուհին և եթէ Միացեալ Նահանգաց նախագահը յայտնեցին իրենց շնորհակալութիւնքը, առ փարչութիւնն Գալլիոյ, իրեն անշահախնդիր և բարեկամական միջնորդութեանն համար։ որով հաշտութեան նախաստանմանքը փութով ընդուներ էին։ Սպանիոյ Թագուհին Կարլոս Գ-ի առաջին խաչը շնորհեց

digitised by A.R.A.R.@